ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Սկիզբը՝ նախորդիւ

Ֆրանսիան, թուրքերը եւ պատմության մի էջ

Ֆրանսիայի թագավոր Ֆրանցիս Ա.-ի մայրը՝ Սավուայի (Սավոյ) արքայադուստր Լուիզան, որին գերեվարել էր Կառլոս Քվինտը, օսմանյան սուլթան Սուլեյման Հրաշալիին ուղղված իր նամակում գրել է.

«Եթե դու, իշխանների՛ իշխան, հոժարես մեզ շնորհել այն աջակցությունը, որ խնդրում ենք, մենք կգերվենք քո բարեհաճությամբ»։

Մեծ թուրքը նրան պատասխանեց այնպիսի ոճով, որ կրկին անգամ հաստատեց իր Հրաշալի կոչումը։

«Իշխանազունների ազատազրկումն արդար չէ։ Դու մտահոգության առիթ չունես։ Մեր ձիերը թամբած են, իսկ սրերը՝ պատրաստ։ Մենք կանենք հնարավոր ամեն բան՝ քո թշնամիներին ձեր երկրից վանելու եւ կալանողներից քեզ փրկելու համար»[291]։

Երբ Ֆրանցիս Ա.-ին հաջորդեց Հենրի Բ.-ն, նա ֆրանսիական դեսպան դ՝Արմոնտի միջոցով նամակ ուղարկեց Ստամբուլ. «Ես դիմում եմ իմ հորը՝ Ֆրանցիս Ա.-ին օգնած եւ իբրեւ իր զավակ որդեգրած թուրք արքային, որ ըստ կարելվույն օժանդակի ինձ՝ գերման թագավորի ճնշմանը դիմակայելու համար»[292]։

Պատմությունն արձանագրում է այն ողջ նպաստը, որ թուրք մեծ իշխանը բերեց ի սեր Ֆրանսիայի։

Իսկ այսօր մենք ականատես ենք լինում, թե ինչպես է Ֆրանսիան խայթում թուրքական՝ թանկագին եւ օգնական ձեռքը։

Հայկական ահաբեկչությունն ու թուրք դիվանագետները

1982 թ. մարտին հանրահայտ Ռոքֆելլեր հիմնադրամը գաղտնի հանդիպում անցկացրեց՝ «Միջազգային ահաբեկչությունն ու դիվանագետների պաշտպանությունն ահաբեկչական հարձակումներից» խորագրով։ Հավաքը կայացավ Շվեյցարիայի սահմանի հարեւանությամբ փռված Կոմո լճի ափին՝ 3000-ից քիչ բնակչություն ունեցող Վիլլա

Սերբելլոնի կոչվող իտալական փոքրիկ գյուղում։ Թուրքիան այս համաժողովին հրավիրված չէր։

Համաժողովի եզրակացություններից դատելով՝ «Թուրք դիվանագետները չգիտեն որտեղ պահել իրենց զենքերը. ատրճանակը պետք է թաքցնել աջ ազդրից վերեւ կամ աջ թեւից հետ՝ գոտկատեղի շրջանում՝ այնպես, որ դրա բռնակն ուղղված լինի դուրս»։

Ըստ միջազգային ահաբեկչության հարցերով փորձագետների՝ դիվանագետները չպետք է բնակություն հաստատեն շինության առաջին կամ վերջին հարկերում, քանի որ մեջտեղի հարկերի համեմատ առավել դյուրին է այդտեղ մուտք գործելը։

Դիվանագետը չպետք է ամեն օր մեքենան նույն վայրում կայանի։ Եւ եթե այդ տարածքում չկա ոստիկանական շուրջօրյա պահպանություն, դիվանագետը պարտավոր է նախքան մեքենա նստելը զննել այն, հատկապես դիտարկել անիվների շրջակայքն ու ստորին հատվածները։

Դիվանագետը պարտավոր է 24 ժամ իր տան դուռը փակ պահել։ Նա երբեք չպետք է բացի դուռը՝ առանց այցելուի ինքնությունը պարզելու։ Նա պետք է իրազեկված լինի ծանրոցների մեջ թաքցված ռումբերի մասին։ Դիվանագետը չպետք է զենքը կրի իբրեւ զարդ։ Նա պետք է հնարավորինս շատ ատրճանակ կրակելով մարզվի՝ մշտապես գիտակցելով, որ միակ փամփուշտն ի զորու է փրկել իր կյանքը։

Դիվանագետը պարտավոր է անգամ ամենաչնչին կասկած հարուցող մանրուքների մասին զեկուցել անվտանգության ուժերին, նույնիսկ եթե կասկածի առիթը պարզապես իր տան դիմաց կայանված անծանոթ մեքենա է։

Մինչ նախապես ընտրված սենյակներ ուղեկցելը դեսպանության եւ հյուպատոսարանների բոլոր այցելուների ինքնությունը պետք է պարզվի, ինչպես եւ ստուգվի զենքի առկայությունը՝ հատուկ դրա համար նախատեսված՝ զրահապատ ապակիներով բաժանմունքում։

Փորձագետները եւս երկու հանգամանք են առանձնացնում. տեղական իշխանությունների կողմից թիկնապահների տրամադրումն ու համապատասխան վայրերում անցակետերի հիմնումը։

Հայ ահաբեկիչների կեղծիքները

Բրիտանական արտաքին գործերի նախարարությունն արդեն հայտարարել է, որ օսմանյան ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի

ուղարկած եւ 1922 թ. Լոնդոնի «Daily Telegraph»-ում[1] տպագրված՝ ենթադրյալ հեռագրերը գոյություն չունեն, հետեւաբար չկա նաեւ որեւէ ճշմարտացի հիմք[293]։ Այդ նամակները հայկական կազմակերպությունները հիշատակում են ամեն տարվա ապրիլի 24-ին [Հայոց նահատակների օրը]՝ իբրեւ ապացույց այն մասին, թե թուրքերը «Հայոց ցեղասպանություն» են ծրագրել եւ իրականացրել։

Ուսումնասիրություններից պարզվել է, որ գեներալ Ալլենբին[2], որին ներկայացնում են իբրեւ այդ փաստաթղթերն առգրավող, անգամ չի էլ լսել այդ վավերագրերի մասին, եւ որ դրանք դեռ այն ժամանակ ստեղծել են հայ ապստամբները։

Ինչպես հայտնի է, Ստամբուլի գրավումից հետո օսմանյան կառավարության ու «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության որոշ անդամների ֆրանսիական եւ անգլիական ուժերը դատեցին Ստամբուլում՝ դրանց իրականացրած՝ ենթադրյալ ցեղասպանության համար։ Դատապարտվածներից ոմանք այնուհետեւ աքսորվեցին Մալթա։

Ավելի ուշ բրիտանացիներն սկսեցին փնտրել Մալթա աքսորվածների մեղավորությունն ապացուցող փաստաթղթեր։ Նրանք Օսմանյան պետական արխիվում իրենց մեղադրանքները հաստատող որեւէ վավերագիր չկարողացան գտնել։

Վաշինգտոնի բրիտանական դեսպանությունը գրում է[294]՝

«Ցավով պիտի հայտնեմ, որ Մալթա աքսորված թուրքերի դեմ՝ իբրեւ <հանցանքի> ապացույց օգտագործելու որեւէ բան չկա։ Որեւէ դեպք չկա, որ կարող է բավարար ապացույց ծառայել։ Կասկածելի վկայությունները որեւէ փաստական հիմք չեն տրամադրում՝ Նորին արքայական մեծության կառավարության կողմից արդեն իսկ ժխտված տեղեկությունը վերստին ստուգման ենթարկելու համար»։

Ավելի ուշ բրիտանական ԱԳ նախարարությունը դիմեց թագավորական դատախազին՝ հետագա քայլերն իմանալու համար։ Թագավորական դատախազը պատասխանեց, որ Մալթա աքսորված թուրքերի կողմից Հայկական ցեղասպանության հրահանգված լինելն ապացուցող ոչ մի փաստարկ չի գտնվել[295]։

---

[1] *Տե՛ս* «Daily Telegraph», *29 մայիս 1922։ Նյութերն առաջին անգամ հրատարակվել են 1920-ին. տե՛ս* Aram ANDONIAN, Documents Officiels concernant les Massacres Arméniens, Paris, Armenian National Delegation։

[2] Էդմունդ Հենրի Հինման Ալլենբի *(1861–1936)*։

Բրիտանացիները նշում են, որ Թալեաթ փաշային դատապարտած գերմանական դատարանն իբրեւ բնօրինակ ընդունել է հեղինակ Արամ Անտոնյանի տրամադրած նամակներից միայն հինգը, իսկ մնացյալը որակվել է կեղծիք, ուստի եւ վճռել է, որ գործում զեղծարարության դեպքեր են առկա։

Թալեաթ փաշան իր հերթին չափազանց զգոն է եղել հրամաններ արձակելիս եւ խիստ պատիժ է սահմանել օրինազանցների համար։ Նա ասել է[296]։

«Հայտնի դարձավ, որ մի շարք ծառայողներ ու անհատներ անկարգ եւ ապօրինի քայլերի են դիմել ռազմական, ինչպես եւ անվտանգության ապահովման նկատառումներով իրականացվող՝ հայերի վերաբնակեցման գործողությունների ժամանակ։ Հետաքննական երեք հանձնախումբ կստեղծվի, որոնց կառաջադրվի տեղում ուսումնասիրել իրավիճակը եւ մեղավորներին ուղարկել ռազմական ատյան։ Հանձնախմբերն իրենց աշխատանքները կսկսեն հնարավորինս շուտ։ Գանձարանը միջոցներ կհատկացնի՝ նրանց օրական ծախսերը հոգալու համար»։

Մեղավոր ճանաչվածները խստորեն պատժվեցին։ Եւ, փաստորեն, արտաքին ուժերի վրա հայերի գործադրած ճնշումների արդյունքում պատիժ կրեցին նաեւ մի խումբ անմեղ մարդիկ։ Այժմ արդեն պարզ է, որ մեղավոր ճանաչված եւ պատժվածների մեծամասնությունը խեղճ եւ թշվառ մարդիկ են, որոնց մշտապես եւ անդառնալիորեն նեղել են հայերը։

Օսմանյան մտավորականությունն ընդդեմ հայկական քարոզչության

Օսմանյան տարածքների հաշվին «Մեծ Հայաստան» հիմնելու հայկական անուրջները ծագում են 1830 թվականից։ Օսմանական մտավորականությունը հաճախ է հակադարձել հայկական քարոզչությանը։

Հետեւյալ փաստաթուղթը սուլթանի համար գրել է ոչ մահմեդական եւ արտասահմանյան դպրոցների փոխտեսուչ-քարտուղարը։ Այն բաղկացած է երկու մասից եւ նախատեսված տպագրության համար։

ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ
(Առաջին մաս)

«Արեւմտյան հանրային կարծիքը մեր դեմ ուղղվեց եւրոպական մամուլում հայերի տպագրած կեղծիքի, սխալ տեղեկությունների եւ

զրպարտությունների արդյունքում։ Որպես սուլթանական իշխանության հնազանդ հպատակ՝ իմ պարտքն եմ համարում հերքել այս ստերն ու հերյուրանքները՝ պատմական, աշխարհագրական, վիճակագրական եւ քաղաքական համապատկերում, որպեսզի ուղղվեն ներկայումս տարածված սխալական ընկալումները, ու եւրոպական հանրությանը հիշեցվի, որ օսմանյան իշխանության հաստատման հենց սկզբից հայերին առանձնակի արտոնություններ էին շնորհված։ Մեր սուլթանն արդեն իսկ տեղյակ է, որ հայկական հարցը մեծ կարեւորություն է ստացել մամուլի շնորհիվ։ Այդ իսկ պատճառով նա կարող է հրատարակել այս պաշտպանական <գրվածք>ը, թե՛ գրքույկի տեսքով, թե՛ լրագրերում։ Լրագրերում տպագրելը հավանաբար ավելի արդյունավետ կլինի։ Սակայն, բնականաբար, ինչպես միշտ, սուլթանը կկայացնի ամենաճիշտ որոշումը»։

[Ստորագրություն] Մեհմետ Սուկրու. ոչ մահմեդական եւ արտասահմանյան դպրոցների փոխտեսուչ եւ քարտուղար։

(Երկրորդ մաս)

«Հայերի մասին տարատեսակ եւ բավականին շատ մտքեր ու գաղափարներ են վերջերս հայտնվել եւրոպական մամուլում։ Հաշվի առնելով, որ հրատարակությունների մի մասը կարծես թե լուրջ հավակնություններ ունի, նախքան մեր մտքերին ու գաղափարներին անցնելը պարտավոր ենք հանգամանորեն ուսումնասիրել նրանց գրածները։

Երբ խորությամբ ուսումնասիրում ենք այդ հրատարակությունները, հասկանալի է դառնում, որ դրանք հայկական քարոզչության վարպետների կողմից տարածվող ստի ու զրպարտության համահավաքն են։ Այս նյութի վերաբերյալ այն բազում գրքերից ու հոդվածներից միայն երեքն ունեն պատմական եւ աշխարհագրական բաժիններ, որ ենթակա են իբրեւ հղում կիրառվելու։ Եւ նույնիսկ դրանք շտկումների կարիք ունեն։ Նրանցից մեկն է 1889-ին Փարիզում տպագրված «Geographical Atlas»*-ը, որ պատրաստել են* Chradaire*-ն ու հեղինակային խումբը՝ գիտական հաստատության համար*[3]*։ Մյուսը՝* «La Grande Encyclopédie»*-ն, նույնպես տպագրվել է հեղինակավոր գիտական հաստատության կողմից։ Իսկ երրորդը*

[3] *Նման հրատարակություն նշված չէ համապատասխան մատենագիտության մեջ. տե՛ս «Հայ քարտեզագրական հրատարակությունների մատենագիտություն», Երեւան, 2018։*

«Geography»-ն է։ Այս երեք աշխատությունների հեղինակները մեծ ճանաչում ունեն Եւրոպայում, եւ նրանց գործերը համարվում են վստահելի։ Օրինակ՝ Արարատ լեռն ու Արաքսի հովիտը «Աշխարհագրական ատլասի» 38-րդ էջում պատկերված են իբրեւ հայոց հայրենի բնօրրան։ «La Grande Encyclopédie»-ում ասվում է, որ Կուր, Արաքս, Եփրատ գետերով եւ Վանա լճով սահմանվող տարածքում հայերը շատ քիչ են խառնվել արտաքին տարրերի հետ։ Էջմիածին ու Արմավիր քաղաքները պատկերված են որպես այդ տարածքի կենտրոններ։ Իսկ իրականում այս երկու կենտրոններից ցանկացած ուղղությամբ 100 կմ ճանապարհ գնալու դեպքում մենք անցնելու ենք շրջաններով, որտեղ թուրքերը, քրդերը, հայերն ու վրացիները փոփոխաբար են մեծամասնություն կազմում։ Նույն հոդվածում նշվում է, որ երկիրը 428-ին գրավել են պարսիկները, է. դարում՝ արաբները, ԺԱ. հարյուրամյակում՝ բյուզանդացիները, կարճ ժամանակ անց՝ թուրք սելջուկները, ԺԳ. դարում՝ մոնղոլները, եւ վերջապես 1514 թվականին՝ օսմանները։ Առանց նշելու, որ այդ հողերն այնուհետեւ գրավել են այլ ուժեր, «Ատլասում» Կարսը, Երեւանը, Ելիզավետպոլը, Թբիլիսին ու Քութայիսը ներկայացվում են Ռուսաստանի կազմում։ Ադրբեջանի մի հատված ներկայացվում է որպես Իրանի մաս։ Ի հավելումն «Ատլասում» նշված այս տարածքների՝ «Encyclopédie»-ն Հարավային Անատոլիայում գտնվող Վանը, Բիթլիսն ու Էրզրումը համարում է Հայաստանի մաս՝ այդպիսով առավել ակնառու դարձնելով մոլորությունները։ Պահանջատիրությունը միայն օսմանյան տարածքներին է վերաբերում, ուստի մենք չենք քննարկի Ռուսաստանի եւ Իրանի հայության կացությունը։ Մեր հետեւությունները մենք կբխեցնենք եւրոպացիների կատարած ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ եկած տվյալներից, թեեւ դրանք կանխակալ բնույթի են եւ շնորհազրկում են թուրքերին, բայց, այնուամենայնիվ, ունակ են որոշ չափով խնդիրը լուսաբանելու»։

Իր փաստաթղթի այս հատվածում Մեհմետ Սուքրուն ներկայացնում է «Օսմանյան Ասիա» աշխատությունից քաղված մի ցանկ՝ այնուհետեւ շարունակելով.

«Անգամ եւրոպացիների <կիրառած> ուռճացված հաշիվներում՝ խնդրո առարկա տարածաշրջանում 340 000 հայ է ներկայացված շուրջ 1 միլիոն մահմեդականության դեմ։ Իսկ իրականում հայերի ընդհանուր քանակը գրվածից կարող է նվազեցվել 100 000-ով, իսկ մահմեդականներինը՝ ավելացվել 500 000-ով։ Հետեւաբար՝ հիշյալ տարածքում

240 000 հայ եւ 1,5 միլիոն մահմեդական են ապրում։ Նույնիսկ եթե ընդունենք եւրոպական՝ թուրքերի համար տհաճ վիճակագրությունը, հայերն այս տարածքում լոկ 23 տոկոս են, այսինքն՝ բավականին հեռու են մեծամասնություն կազմելուց։

Հիմա, երբ արդեն դիտարկել ենք հայերի ազգագրական եւ աշխարհագրական վիճակը նշյալ տարածաշրջանում, արժե անդրադառնալ խնդրի վերաբերյալ «Encyclopédie»-ում տրված պատմական հանգամանքներին։ Ընդունված է, որ ո՛չ օսմանյանները, ո՛չ նրանց նախորդած սելջուկ թուրքերը եւ ո՛չ անգամ դրանցից շատ առաջ աբասյան արաբները, մուտք գործելով այս տարածք, անկախ Հայաստան չեն տեսել։ Չնայած՝ Տիգրան անունով արկածախնդիր մեկն իսկապես անկախ թագավորություն է հիմնել մոտ 2000 տարի առաջ, բայց շուտով պարտության է մատնվել հռոմեական հրամանատար Լուկուլլոսի կողմից եւ որպես ստրուկ՝ տարվել Հռոմ։ Այդ ժամանակներից ի վեր հայերով բնակեցված շրջանները կառավարել են հռոմեացիները, բյուզանդացիները, աբասյան արաբները, սելջուկ թուրքերը, օսմանները, ռուսներն ու պարսիկները։ Վանի, Բիթլիսի, Էրզրումի շրջանները, որ մնացին օսմանյան ձեռքերում, մինչեւ վերջերս անվանվել են Արզի Ռում, որը նշանակում է Ռումի երկիր [բյուզանդական հույների]։ Այս անունը կիրառել են նաեւ աբասյան արաբները եւ սելջուկ թուրքերը։

Հաղթական ազգերը մշտապես փորձում են վերացնել նվաճյալների մշակույթը, սովորույթներն ու իրավունքները։ Անգամ մեր քաղաքակիրթ ժամանակներում Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի եւ Ռուսաստանի պես առաջադեմ ազգերն են փորձում նման քաղաքականություն որդեգրել։ Օսմանական կառավարությունը, սակայն, երբեւէ նման կերպ չի վարվել հայերի հանդեպ։ Վերջին տարիներին նրանց որոշակի արտոնություններ են շնորհվել, եւ նրանց արժանապատվությունը վնասող որեւէ քայլ չի իրագործվել։

Քաղաքական ասպարեզում <իրականացվող> վերջին բարեփոխումները վստահություն են ներշնչում, որ Օսմանյան կայսրությունում բնակվող ազգային խմբերը չեն հարստահարվի կամ ստրկացվի։ Հայ փոքրամասնությունն էապես շահեց այս հանգամանքից։ Իրենց աշխատանքային եւ մասնագիտական կարողություններից ելնելով՝ հայերին պաշտոններ վստահեցին կառավարական հաստատություններում, դեսպանատներում ու հյուպատոսարաններում, <երեսփոխանական> ժողովում եւ

դատարաններում։ Նրանք նաեւ լինում են նահանգապետ, քաղաքապետ, գյուղապետ, պաշտոնավարում որպես պետական ծառայող, աշխատում տնտեսական ու քրեական դատարաններում, քաղաքային խորհուրդներում եւ հանրային կառույցներում, ինչպես եւ ազգային կրթական խորհուրդներում։ Այսինքն, իրենց շնորհված արտոնություններից բացի, հայերը նաեւ օգտվում են մահմեդականներին տրված բոլոր իրավունքներից։ Այլ կերպ ասած՝ նրանք այնպիսի արտոնություններով են օժտված, որ անգամ մահմեդական բնակչությունը չունի»։

Վերջաբան ու <անդրադարձ> պրոֆեսոր Շոու<ին>

Լոս Անջելեսի Քալիֆորնիայի համալսարանի դասախոս դոկտոր Սթանֆորդ Ջ. Շոուն եւ նրա կինը՝ Եզել Քուրալ-Շոուն, տարիների հետազոտությունների արդյունքում երկնել են «Օսմանյան կայսրության եւ ժամանակակից Թուրքիայի պատմություն»[298] աշխատությունը, որը վեր է հանում հայկական հարցի վերաբերյալ փաստերը։ Երբ համալսարանը հրատարակեց այս գիրքը ու տարածեց համայն աշխարհի գրադարաններում, Միացյալ Նահանգների հայկական ահաբեկչական կազմավորումներն արշավ սկսեցին պրոֆեսոր Շոուի դեմ։ Նրա լսարանները բազմիցս բռնի կերպով ցրվեցին, առեւանգվեցին նրա փաստաթղթերը, իսկ տունը ռմբահարվեց։

Պրոֆեսոր Շոուն սակայն չհանձնվեց, նա չկեղծեց փաստերը։ Արդյունքում՝ նա շահեց համալսարանականների աջակցությունն ու հիացմունքը։ Սակայն ստիպված էր ընտանյոք հանդերձ հեռանալ Միացյալ Նահանգներից։

Մենք պահել ենք այդ գրքի վերջաբանը, որ փաստորեն պրոֆեսոր Շոուի գրքի համառոտությունն է։ Կոչ ենք անում աշխարհին՝ վերջ տալ «խաչակրաց մտայնությանը» եւ լսել ու հետեւել «հայկական ջարդերում» իրենց կյանքը կորցրած հազարավոր անմեղ թուրքերի դառն ճակատագրին։ Մենք խնդրում ենք աշխարհին՝ ականջալուր լինել սվինահար եղած երեխաների ողբահար լացին, հրի մատնված ծերերի, բռնաբարված կանանց հառաչին, ինչպես եւ մարդկանց, որոնց սպանեցին աչքերը հանելուց, ականջները կտրելուց հետո՝ ենթարկելով այնպիսի տանջանքների, որ մարդու ստիպում են մոռանալ մարդկայնության մասին։

Մենք կոչ ենք անում համայն աշխարհի ազգերին՝ վերջ տալ «Թուրքերի նկատմամբ ատելությանը»։

Պրոֆեսոր Շոուն գրում է.

«Երբ ռուսներն ըմբռնեցին, որ անկարող են Բուլղարիայի միջոցով ազդեցություն հաստատել Հարավարեւելյան Եւրոպայում, իբրեւ այլընտրանք՝ նրանք ձեռնամուխ եղան Օսմանյան կայսրությունը կործանելու տարբերակին։ Ռուսներն իրենց ջանքերն <ու ուժերը> ուղղեցին հայկական փոքրամասնության կողմը, որն այդ ժամանակ սուլթանի դեմ ապստամբելու դույզն-ինչ մտադրություն չուներ։ Նրանք <ներդաշնակ կերպով> ներգրավված էին օսմանական ավանդական հասարակության մեջ։ Նրանց Գրիգորյան համայնքը, ինչպես նաեւ Ստամբուլի Հայոց պատրիարքությունը վարչական, կրոնական, մշակութային ազատություններով էին օժտված։ Ինչպես Օսմանյան կայսրության մյուս՝ ոչ մահմեդական համայնքներում, կառավարման վերաբերյալ հայերի շրջանում ծագող դժգոհություններն իրենց կրոնական նվիրապետության <գործունեության> արդյունք էին։

Սա ակնհայտ է այն փաստից, որ դժգոհություն հայտնող սակավ հայերը դա արտահայտել են կրոնական հարթության վրա, եւ նրանցից ոմանք այնուհետեւ կաթոլիկություն կամ բողոքականություն են ընդունել։

Բարեփոխման ժամանակաշրջանում կաթոլիկության եւ բողոքականության պաշտոնական ճանաչումն օսմանյան կառավարության կողմից՝ ուղղափառ հայերին իշխանության ավանդական կառուցվածքի այլընտրական հնարավորություն ընձեռեց։ Հայ համայնքը կաշկանդված էր հարուստների, կրոնական առաջնորդների եւ վաշխառուների դաշինքի տիրապետության պայմաններում։ Բարելավումը, որ եկավ վերափոխումներին զուգընթաց, ժողովրդավարացման ճանապարհ հարթեց՝ ինչպես հայ, այնպես եւ այլ համայնքների համար։ Թեեւ ունեւոր դասը տարբեր ուղիներով պահպանում էր իր գերիշխանությունը, համայնքի պակաս բարեկեցիկ անդամները նույնպես սկսեցին լսելի դարձնել իրենց ձայները։

Միջին Արեւելքում հայերն իշխող դիրք էին գրավում դրամական, թանկագին քարերի եւ ազնիվ մետաղների վաճառքի ասպարեզներում, արտաքին առեւտրում, շինարարության, դեղագործության եւ թատրոնի ոլորտում։ Նրանք մշտապես կարեւոր դերակատարում են ունեցել օսմանական արդյունաբերության եւ առեւտրի մեջ։

Այստեղ հարկ է նշել, որ հունական հեղափոխությունից հետո կայսրության տարածքի կրթական հաստատությունների եւ պետական <հիմնարկների> հույն պաշտոնեությանը փոխարինեցին հայերը։ Պետական հիմնարկների բարեփոխումների ժամանակ օտար լեզուների վարժ իմացությունը, դրամական եւ առեւտրային հարցերում կուտակած փորձը հայերին օգնեցին մասնագիտական առաջընթաց արձանագրել բոլոր ոլորտներում, ներառյալ՝ արտաքին գործերի, ֆինանսների, կրթության, արդարադատության, փոստային, երկաթուղին եւ ժողովրդագրական ծառայությունները։

Եւրոպացի որոշ ճանապարհորդներ ու միսիոներներ նշել են, որ սուլթանի օրոք մոտ 2 միլիոն հայ է ապրելիս եղել <կայսրության տարածքում>։ Մարդահամարի օսմանյան գրասենյակը, որ բնակչության քանակի վերաբերյալ տեղեկությունները պարբերաբար քաղում է անձնագրային համակարգի տվյալներից, կայսրությունում բնակվող հայերի կապակցությամբ մատնանշում է 988 887 թիվը։ Դիցուք թե 160 166 կաթոլիկների եւ 36 339 բողոքականների երկու երրորդը հայեր էին. այդ ցուցանիշը կբարձրանա մինչեւ 1 125 000։ Սա կազմել է <Թուրքիայի> բնակչության ընդհանուր թվի՝ 20 475 225-ի ընդամենը 5,5 տոկոսը (չհաշված Եմենի, Տրիպոլիի, Բենղազիի, Եգիպտոսի եւ Թունիսի շրջանները, ուր մարդահամար չի անցկացվել)։

Նույնիսկ Ստամբուլում, ուր հայերի գերակշիռ մասն է ապրելիս եղել, 1878 թ. վիճակագրության համաձայն, 97 782 ուղղափառ հայ կար, որոնք 407 կաթոլիկ եւ 340 բողոքական հայերի հետ կազմում էին քաղաքի ընդհանուր բնակչության (542 437) 18 տոկոսը։

Հայերն սկսել են սփռվել աշխարհով մեկ բյուզանդական տիրապետության հաստատումից հետո, եւ երբ թուրքերը նվաճեցին Անատոլիան։

1882-ի դրությամբ հայերը փոքրամասնություն էին բոլոր գավառներում եւ մարզերում, որոնք իրենց հայրենիք էին հռչակում։ Շատ հազվադեպ նրանք մեծամասնություն էին կազմում շրջանային մակարդակում՝ գյուղական բնակավայրերում։ Այդպիսի լոկ երկու շրջան կար։

Գյուղական վայրերում մահմեդական գյուղացիների հարեւանությամբ ապրող հայերի տնտեսական վիճակն ավելի լավ էր, քան այլ վայրերում՝ նստակյացների կամ քոչվորների ընկերակցությամբ։ Խոշոր հողատերերի եւ պետական պաշտոնյաների վատ վարչարարության արդյունքում երբեմն-երբեմն քոչվորներն արշավում <եւ ներխուժում> էին

հողագործությամբ զբաղվողների տարածքներ։ Այս հարձակումներն անկասկած վնասում էին թե՛ մահմեդականներին եւ թե՛ քրիստոնյաներին։ Ներհայկական բոլոր խնդիրները ծագում էին իրենց հոգեւոր առաջնորդների միջեւ ընթացող պայքարի պատճառով։

Հար եւ նման սուլթանի մնացյալ հպատակներին, հայերը եւս կարող էին ապրել այնպես, ինչպես իրենք կկամենային։ Նրանք կարող էին ըստ իրենց ցանկության կառավարել դպրոցները, եկեղեցիներն ու հիվանդանոցները։

ԺԹ. դարի սկզբներին կաթոլիկ եւ բողոքական հայերն արեւմտյան միսիոներների ազդեցությամբ նոր ուժ հաղորդեցին հայոց ազգային մշակույթի զարթոնքին։

Համապատասխանաբար զարգացավ նաեւ դասական հայագիտության ուսումնասիրությունը։ Աստվածաշունչը դասական հայերենից թարգմանվեց աշխարհաբար։ Գրական նոր դպրոց հիմնվեց։ Հայ ուղղափառ համայնքը, մասամբ նաեւ կառավարական ճնշումների արդյունքում, ավելի ժողովրդավար կառուցվածք սկսեց ընդունել։ Դրան զուգահեռ՝ ստորին խավերի ճնշումն ստիպեց նրանց որդեգրել համեմատաբար աշխարհիկ կրթական համակարգ, որից սկզբնավորվեց ազգային մշակույթի վերածնունդը։

Բազմաթիվ ունեւոր հայեր իրենց զավակներին ուսանելու էին ուղարկում Եւրոպա (հիմնականում՝ Ֆրանսիա)։ Այդ մարդկանց վրա բնականաբար ներգործում էր ֆրանսիական մշակույթը, եւ երբ վերադառնում էին հայրենիք, դառնում էին արմատական բարեփոխումների շարժման առաջամարտիկներ։ Նրանց պահանջներն էին դառնում աշխարհիկացումն ու անկախացումը։ Նմանօրինակ հայացքների շնորհիվ էր, որ նրանք միացան ու ակնառու դեր խաղացին «Երիտթուրքական» շարժման ժամանակ։

Օսմանյան կառավարության տարիներին հայ ուղղափառ համայնքը բարգավաճում էր։ Ուստի հայ վաճառականներն ու քաղաքացիական ծառայողները դեմ էին հանդես գալիս չնչին փոքրամասնության՝ անկախացման մասին պահանջներին։

Բեռլինի կոնգրեսին հաջորդած՝ Բուլղարիայի եւ Սերբիայի անկախացումը ոգեշնչեց հայերին։ 1877 թ. ցարական բանակում ծառայող հայ սպաներն ու պաշտոնյաները գլխավորեցին Կովկասը եւ Արեւելյան Անատոլիան նվաճելու ռուսական գործողությունները։ Երբ նրանք սուլթանի

դեմ միավորվելու կոչով դիմեցին թուրքահայությանը, որոշ հայեր հանձն առան, եւ ապստամբական շարժումն ընդլայնվեց։

Սան Ստեֆանոյում եւ Բեռլինում Ներսես պատրիարքը փորձեց շահել եւրոպացիների աջակցությունը Արեւելյան Անատոլիայում հայկական պետություն հիմնելու գործում։ Դրան զուգահեռ՝ ռուսների քաջալերմամբ որոշ հայեր իրենց նպատակներին հասնելու համար ապավինում էին ահաբեկչությանը։

Արդյունքում մի շարք հայկական հեղափոխական կազմավորումներ ստեղծվեցին։ Այդ կազմակերպություններն սկսեցին Եւրոպայի մեծ քաղաքներում լրագրերի տպագրությամբ զբաղվել եւ օտարերկրյա փոստային ծառայությունների միջոցով տարածել Օսմանյան կայսրությունով մեկ։

Թբիլիսյան մի խումբ սկսեց Բաթումիից Ռիզե զենք եւ զինամթերք առաքել։ Թավրիզի հայերն զբաղվում էին մահմեդական գյուղերում գործակալներ ներդնելով։ Սակայն, ի տարբերություն Բուլղարիայի եւ Սերբիայի, հայկական շարժումը հաջողությամբ չպսակվեց, քանի որ նրանք ջանքերը չէին կենտրոնացրել մի որեւէ շրջանում։ Բացի այդ՝ Ռուսիո կայսր Ալեքսանդրը դադարեց հայերին օժանդակել՝ վախենալով, որ սուլթանի իշխանության խարխլումը կարող է իր իսկ հարազատ ժողովրդի մեջ արմատական գաղափարներ հրահրել։

Հայերն ահաբեկչական հրոսակախմբեր հիմնեցին եւ Արեւելքում բազմաթիվ սպանություններ ու ահաբեկչական գործողություններ իրականացրին, որպեսզի ռուսներին ու բրիտանացիներին ստիպեն միջամտել։ Այդ գործողությունների արդյունքում աստիճանաբար ավելի ու ավելի էր դժվարանում մահմեդական եւ քրիստոնյա համայնքների համակեցությունը, չնայած Սուլթան Աբդուլհամիդ Բ.-ի անվտանգության ուժերը երբեմն կանխում էին հայերի դեմ վրեժխնդրության մահմեդականների փորձերը։

Հնչակյան կուսակցությունը հիմնել են Ֆրանսիայում եւ Շվեյցարիայում սովորող հայ ուսանողները։ 1890-ին Ռուսաստանում ստեղծվեց Հայ հեղափոխական դաշնակցությունը, որ հայտնի է նաեւ որպես Դաշնակցական կուսակցություն։ Նրա նպատակն էր համախմբել հայերին, որոնց մասնատել էր կայսրը՝ ցանկանալով արմատախիլ անել երկրում ծագող ծայրահեղական շարժումները։ Այս երկու կազմակերպություններն ստանձնեցին Օսմանյան կայսրությունում իրականացված

ահաբեկչական գործողությունների պատասխանատվությունը։ Նրանք հարձակումներ ու ջարդեր ծրագրեցին եւ իրականացրին կայսրության ժողովրդի եւ պաշտոնատար անձանց դեմ։ Նրանք անգամ հարձակվել են այլ հայերի վրա։ Նրանց գերակա նպատակն էր տարածաշրջանի մահմեդական բնակչության արտաքսումից ու բնաջնջումից հետո Արեւելյան Անատոլիայի վեց նահանգներում անկախ եւ ընկերվարական Հայաստան հիմնել։

Դաշնակցական կուսակցությունն Ստամբուլում, Տրապիզոնում եւ Վանում բջիջներ ստեղծեց, բայց որեւէ նշանակալից քայլ չկարողացավ իրականացնել մինչեւ 1895 թվականը։ Հնչակյան կուսակցությունը, մյուս կողմից, Էրզրումը, Խարբերդը, Զմյուռնիան, Հալեպն ու Ժնեւը ներառող ընդլայնված ցանց ստեղծեց եւ հաջողություն ուներ թե՛ Կայսրության ներսում, թե՛ դրսում։ Այս կազմակերպությունը նաեւ համագործակցում էր Մակեդոնիայի, Կրետեի եւ Ալբանիայի՝ Օսմանյան կայսրության դեմ պայքարող խմբերի հետ։

Հնչակյան կուսակցությունը նաեւ Կայսրությունով մեկ հեղափոխական գրականություն տարածեց, ռմբահարում իրականացրեց մի քանի հասարակական վայրերում եւ սպանեց պաշտոնյաների։

Այդ ժամանակ մահմեդական <քոչվոր> ցեղերն ու գյուղացիներն սկսեցին վրեժ լուծել հայերից։ Տվյալ պահին միլիոնավոր փախստականներ կային, որ ջարդերի էին ենթարկվել Ռուսաստանում, Բուլղարիայում եւ Բոսնիայում։ Եւ դժվար չէր, գլխավորապես հիմնվելով այդ փախստականների վրա, աշխարհազոր կազմել հայերի դեմ։

Սկզբնապես սուլթան Աբդուլհամիդ Բ.-ն սերտ կապեր էր պահում հայերի հետ։ Սակայն հետագայում նա փոխեց իր այս դիրքորոշումը։ Նա հայերին մեղադրեց անհնազանդության մեջ եւ կառավարությանը հանձնարարեց քայլեր ձեռնարկել հայ ձեռներեցների տնտեսական անվիճելի հզորությունը կրճատելու ուղղությամբ։ Արեւելքում ապստամբությունները ճնշելու համար նա գործի դրեց համիդիե ջոկատները։

1890—1893 թթ. հայկական ահաբեկչությանն առերեսվելուց հետո կառավարությունը հարկադրված էր երբեմն-երբեմն դիմել խիստ միջոցների։ Սակայն այս խստությունն այնքան կտրուկ չէր, որ Հնչակյան կուսակցության ձայնը լսելի դառնար Եւրոպայում։

Հնչակյան կուսակցությունը հայկական մեծ բնակչություն ունեցող Սասունում ապստամբություն կազմակերպեց եւ գյուղաբնակներին

հրահրեց հարձակվել կառավարական հարկահավաքների վրա։ Երբ կարգուկանոնը վերականգնելու նպատակով զորախումբ ուղարկվեց, ապստամբներն այրեցին մահմեդական գյուղերն ու հեռացան լեռները։ Երբ բանակն ու համիդիե ջոկատները Սասուն հասան, բոլոր գյուղերն ավերված էին, իսկ բնակչությունը՝ սպանված։

Այդ ժամանակ եւրոպացիներն օսմանական կառավարությանը մեղադրեցին հայկական 25 գյուղերի հրկիզման ու 20 000 հայության կոտորածի մեջ։ Ստեղծվեցին հանձնաժողովներ, որ պատրաստ էին հավատալու վատթարագույն վկայություններին անգամ։ Սակայն Աբդուլհամիդ Բ.-ն կանխեց օտարերկրացիներին՝ խոստանալով, թե բարեփոխումներ կիրականացնի Արեւելքում։

Եւրոպացիների կեցվածքը հիասթափեցրեց Հնչակյան կուսակցությանը։ Եւ այս անգամ նրանք Ստամբուլն ընտրեցին որպես թիրախ։ 1895 թ. սեպտեմբերի 30-ին դեսպանությունների թաղամասում ու Բաբիալիում հանձնաժողովի զեկույցի դեմ բողոքի պատրվակով նրանք քայլերթ իրականացրին։ Բայց մայրաքաղաքային զանգվածները, այդ թվում՝ գործազուրկներն ու տնանկ փախստականները, կատաղած էին։ Անվտանգության սպայի սպանության ասեկոսեները զանգվածային անկարգությունների պատճառ դարձան։ Եւ միայն ռազմական դրություն սահմանելով՝ կառավարությունը կարողացավ իրավիճակը վերահսկողության տակ վերցնել։ Նմանատիպ միջադեպեր եղան նաեւ Տրապիզոնում եւ այլ քաղաքներում։ Դրանից հետո Եւրոպան սկսեց աղաղակել, թե կառավարության աջակցությամբ մահմեդականները կոտորում են քրիստոնյաներին։ Սակայն որեւէ միջամտություն չեղավ, եւ դա առավել հիասթափեցրեց ահաբեկիչներին։

1895—1896 թթ. անվտանգությունն առավել թուլացավ. տեղի ունեցան ցավալի դեպքեր։ Իրենց խնդրի վրա ուշադրություն հրավիրելու նպատակով 1896 թ. օգոստոսի 26-ին մի խումբ հայեր գրավեցին Բեյօղլուի Օտոմանյան դրամատունը։ Նրանք ռումբեր տեղադրեցին շենքի շուրջն ու պատանդ առան աշխատակիցներին (Մի ուրիշ անգամ հայերն այլ քայլերթ իրականացրին դեպի Բաբիալի, սպանեցին մի քանի զինվոր եւ սպառնացին ոչնչացնել մեծ վեզիրին։ Ստամբուլի զանազան հատվածներ ռմբահարվեցին, եւ զոհվեցին անմեղ մարդիկ։ Սուլթանի մեքենայի տակ տեղադրված ռումբը սպանեց սուլթանի 20 թիկնապահներին)։ Իր հեղինակությունը չկորցնելու համար սուլթանը մերժեց հայերի

պահանջները։ Դրամատան դեպքն ավարտվեց մեկ օր տեւած գրավումից հետո. պատանդներն ազատվեցին, ապստամբները ցրվեցին։

Լարվածությունը կրճատելու եւ հետագա դեպքերից խուսափելու նպատակով սուլթանը համաներում հայտարարեց։ Քրիստոնյա զգալի փոքրամասնություն ունեցող շրջաններում քրիստոնյա կառավարիչներ նշանակվեցին։

Այն ժամանակ լորդ Սոլսբերին ցար Նիկոլայ Բ.-ի գործակցությանն էր ձգտում։ Նա առաջարկում էր բրիտանական նավատորմն ուղարկել Ստամբուլ՝ իբրեւ աջակցություն հայոց պահանջներին։ Սակայն վախենալով, որ դրանով Օսմանյան կայսրության վրա բրիտանական ազդեցությունը կարող է ուժեղանալ, Ռուսաստանն ու Ֆրանսիան մերժեցին այդ առաջարկը։

Այսպիսով՝ արտասահմանյան աջակցությունից զրկված հայկական ահաբեկչական խմբերն սկսեցին ներսից կազմալուծվել։ Եւ երբ նրանց սադրիչ ազդեցությունը չեզոքացվեց, միջհամայնքային հարաբերությունները շատ վայրերում բնականոն վիճակի վերադարձան։ Օսմանյան կառավարությունն առանց վարանելու կրկին անգամ հայերին վստահեց հանրային ծառայության բարձր պաշտոններ։ Հայ ձեռներեցն ու երկրագործը վերադարձան իրենց գործին։ Մի շարք հայ ձեռներեցներ ու որոշ հեղափոխական մտավորականներ գաղթեցին Իրան, Եգիպտոս, Եւրոպա եւ Միացյալ Նահանգներ։ Հայկական հարցը մոռացվեց մինչեւ 1897 թիվը։ Սակայն երբ կայսրությունը կորցրեց նաեւ Բալկանյան թերակղզին, բնակչության ընդհանուր թվում հայերի հարաբերական տոկոսն ավելացավ։

Էնվեր փաշան նախապես կամենում էր իր նպատակներն իրականացնել Արեւելքում։ Եւ երբ նա ստանձնեց ռազմական նախարարի պաշտոնը, սկսեց հզորացնել Էրզրումում տեղակայված երրորդ բանակը, որի պաշտպանական շրջանում էր գտնվում ողջ հյուսիսարեւելյան Անատոլիան՝ Վանա լճից մինչեւ Սեւ ծով։ Ուստի երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, նա պատրաստ էր հարձակման։ Նա տարածաշրջանի հայ բնակչության աջակցությունն ստանալու մի վերջին փորձ ձեռնարկեց։ Սակայն հայ առաջնորդների հետ իր հանդիպումն ավարտվեց ձախողմամբ։ Կովկասում եւ Արեւելյան Անատոլիայի մի քանի շրջաններում հայկական ինքնիշխան պետություն ստեղծելու ռուսական խոստումը կարեւոր ազդեցություն ունեցավ այդ հանդիպման հանգուցալուծման

հարցում։ Հայերը հույս ունեին, որ ռուսական օժանդակությամբ կարող են ավարտին հասցնել տարածքի մահմեդական բնակչության մեծագույն մասի արտաքսումն ու բնաջնջումը։ Ուստի եւ հայերն Էնվեր փաշային պատասխանեցին, թե իրենք չեզոքություն կպահպանեն։ Սակայն անհնար էր թաքցնել ռուսների նկատմամբ իրենց համակրանքը։ Հանդիպումից անմիջապես հետո հայկական պատվիրակությունը, ի թիվս այլոց՝ նաեւ թուրքական խորհրդարանի մի անդամ, Կովկաս ուղեւորվեց՝ ռուսական բանակային հրամանատարության հետ քննարկելու համագործակցության հարցերը։ Ակնհայտ էր, որ հայերը փորձում են խաթարել օսմանյան ռազմական ներուժը։

Եւ նույնիսկ այս պայմաններում Էնվեր փաշան պնդում էր, որ օսմանյան անվտանգության ուժերն ունակ են կանխելու հայկական նենգամիտ ու վնասարարական գործողությունները։

Երբ թուրքերը պատրաստվում էին ձմեռային հարձակմանը, հայերի հետ համագործակցության ռուսական վերջին ծրագրին ծանոթանալու նպատակով Նիկոլայ Բ. կայսրն ուղեւորվեց Կովկաս։ Հայկական ազգային վարչության առաջնորդներին Նիկոլայ Բ. կայսրն ասաց.

«Ողջ աշխարհի հայերն շտապում են միանալ ռուսական բանակին, որպեսզի սեփական արյամբ իրենց ներդրումն ունենան ռուսական ուժերի հաղթանակի գործում։ Ռուսական դրոշը կծածանվի Բոսֆորի եւ Դարդանելի վրա։ Թուրքական անուրի տակ կքած ժողովուրդները կստանան իրենց բաղձալի ազատությունը։ Թուրքիայի հայերը, որ տառապել են Քրիստոս դավանելու համար, ռուսական պաշտպանության ներքո կունենան նոր եւ ազատ կյանք»։

Այսպիսով՝ հայերն սկսեցին անդամակցել ռուսական բանակին։ Վստահանալով, որ Ստամբուլի առման օրը մոտ է, Նիկոլայ Բ. կայսրը վերադարձավ Սանկտ Պետերբուրգ։

Ռուսները գրոհեցին 1914 թ. նոյեմբերի 14-ին, բայց մի քանի օրվա ընթացքում ետ մղվեցին։ Դեկտեմբերի 21-ին Օսմանական երրորդ բանակը հակահարձակման անցավ։ Այդ միավորումն առաջնորդում էր Էնվեր փաշան։ Գործողության նպատակն էր ռուսներին կտրել Կարսում տեղակայված նրանց գլխավոր հենակետից եւ ետ վերցնել Կարսը, Արդահանն ու Բաթումը։ Օսմանացիների առաջին նպատակակետը Սարիղամիշն էր։ Դեկտեմբերի 26-ին օսմանական բանակը նվաճեց Սարիղամիշը, սակայն շուտով կորցրեց այն՝ թողնելով ռուսներին։ Բանակի վատթարացող

բարոյական վիճակը ճանապարհ հարթեց Անատոլիայում ռուսական հարձակում իրականացնելու եւ իշխանության դեմ հայկական ապստամբություն բարձրացնելու համար։

Ռուսներն արդեն հայերին դուրս էին բերել իրենց սահմանային տարածքից եւ այն վերածել պատերազմական գոտու։ Ռուսական այս քայլին հայերը համաձայնել էին առանց երկմտելու, քանի որ վստահ էին, թե ռուսները կհաղթեն։

Մոտավորապես 1915 թ. մարտ ամսվա կեսերին, երբ պատերազմը դեռ շարունակվում էր ռուսների, ինչպես նաեւ Եգիպտոսում՝ բրիտանացիների դեմ, բացառապես անվտանգության նկատառումներից ելնելով՝ որոշում կայացվեց Վանից, Էրզրումից եւ Բիթլիսից հայերին տարհանելու վերաբերյալ։ Այս տարհանվածները պետք է վերաբնակեցվեին հյուսիսային Իրաքի Մոսուլի շրջանում գտնվող գյուղերում ու ճամբարներում։ Սիրիական հարթավայրերում ապրող հայերը նույնպես պիտի խորքային շրջաններ ուղարկվեին։ Բանակին հատուկ հրահանգ տրվեց. գաղթի ընթացքում եւ նոր տարածքներում վերահաստատվելու ժամանակ հայերին պաշտպանել քոչվորների հարձակումներից։ Տարհանվածների կարիքները հոգալու նպատակով հատուկ միջոցներ ձեռնարկվեցին։ Ռազմական առաջնորդներին հրահանգվել էր կանխարգելել բոլոր հնարավոր դեպքերը, եթե տարիներ շարունակ հայկական ահաբեկչական գործողություններից տուժածները փորձեն օգտվել առիթից։ Հայերը պետք է հոգածության եւ պաշտպանության ներքո լինեն, մինչեւ որ պատերազմի ավարտից հետո վերադառնան իրենց տները։ Մասնավոր օրենքով ստեղծված հատուկ հանձնախումբը գրանցել է հայերի թողած սեփականությունը, ի պահ վերցրել գույքի վաճառքից գոյացած հասույթը, որ գաղթյալների ետ դառնալուն պես հնարավոր լինի ամեն բան վերադարձնել տերերին։ Տարհանվածներին պատկանող շինություններում մահմեդականները կարող էին հաստատվել վարձակալի կարգավիճակով՝ պայմանով, որ տերերի վերադառնալուն պես պիտի դուրս գան։

Հայերն ու Արեւմուտքը մշտապես պնդել են, որ Առաջին աշխարհամարտի ընթացքում ավելի քան մեկ միլիոն հայ է կոտորվել։ Ներկա պնդումը հիմնված է այն ենթադրության վրա, թե պատերազմից առաջ Թուրքիայում ապրելիս է եղել 2,5 միլիոն հայ։ Սակայն, ըստ օսմանյան վիճակագրության, նախապատերազմյան շրջանում Թուրքիայում ապրող հայերի թիվը 1,3 միլիոն էր։ Այս մարդկանց միայն կեսն էր ապրում այն

վայրերում, ուր տեղի են ունեցել նշված միջադեպերը։ Այսպիսով՝ մոտ 400 000 հայ վերաբնակվել է Իրաքում։ Գրեթե 500 000-ը պատերազմի ընթացքում մեկնել է Կովկաս։ Պատերազմից հետո 150 000–200 000 հայ գաղթել է Արեւմտյան Եւրոպա ու Միացյալ Նահանգներ՝ Կայսրության սահմաններում թողնելով ընդամենը 100 000 հայ բնակչություն։ Մոտավորապես 200 000 հայ մահացավ սովից, հիվանդություններից ու պատերազմական ծանր պայմաններից, եւ ոչ թե տարհանման արդյունքում։ Չի կարելի մոռացության մատնել, որ նույն պատճառներով երկու միլիոնից ավելի մահմեդական է զոհվել։ Օսմանյան կառավարության գաղտնի արխիվներից եւ ոչ մեկը չի ներառում «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության որեւէ առաջնորդի կամ կենտրոնական իշխանության որեւէ պաշտոնյայի արձակած որեւէ հրաման ցեղասպանության մասին։ Փոխարենը կարող ենք գտնել տեղական առաջնորդներին ուղղված հատուկ հրամաններ, որոնցում պահանջվում է միջոցներ ձեռնարկել՝ մարդկային կորուստների հանգեցնող բախումներն ու անկարգությունները բացառելու համար։

Երբ 1915 թ. ապրիլին սկսվեց հայերի տարհանումը, ռուսահայ դաշնակցականներն ապստամբություն կազմակերպեցին Վանում, ուր ապրում էր 33 789 հայ (հայ բնակչության ընդհանուրի 42,3 տոկոսը)։ Վախենալով, որ այն կարող է իրենց վնասել, տեղի հայ առաջնորդները դեմ էին այդ գաղափարին, բայց այն բանից հետո, երբ մահմեդական բնակչությունը վտարվեց, նրանք ի վերջո համոզվեցին, որ ռուսները ռազմական օգնություն կտրամադրեն։ Այսպիսով՝ Ռուսաստանի Կովկասյան բանակը գրոհ սկսեց Վանի ուղղությամբ։ 1915 թ. մայիսի 14-ին հայերի աջակցությամբ ռուսական ուժերը մուտք գործեցին Վան։ Երկու օրում այդ ուժերը կոտորեցին մահմեդական բնակչությունը։ Օսմանյան սակավաթիվ կայազորը հարկադրված էր նահանջել դեպի Վանա լճի հարավակողմ։ Այսպիսով՝ ռուսների հովանու ներքո հայկական պետություն հիմնվեց։ Վանա լճի հարավային ափերից թուրքերին դուրս մղելու եւ Ճապաղջուրում ռուսական ուժերի հարձակման համար հող նախապատրաստելու նպատակով հայկական բանակ կազմավորվեց։ Մուշում եւ խոշոր այլ կենտրոններում բնակվող հազարավոր հայեր սկսեցին գաղթել դեպի հայկական նորաստեղծ պետությունը։ Հուլիսին արդեն 250 000 հայ կար Վանում, որ մինչեւ պատերազմն ընդամենը 50 000 մահմեդական եւ ոչ մահմեդական բնակիչ է ունեցել։ Թուրքերի՝ այնտեղ ուղարկված օգնական զորքերը

հայերին ստիպեցին նահանջել: Օսմանական ուժերին օժանդակեցին բազմաթիվ հայեր, որ վախենում էին իրենց աջակցությամբ իրագործած ջարդերի պատասխանատվությունից: Մեկ ամիս տեւած դիմադրությունից հետո Ջեւդեթ բեյի շնորհիվ Վանը վերադարձվեց: Նահանջող ռուսական բանակի հետ մոտ 200 000 հայ գաղթեց Կովկաս: Այդ փախստականների մեծ մասն ապրել էր շրջաններում, որոնք տարհանման հրամանում ներառված չեն եղել: Այդ հայերից շատերը մահացան, երբ օսմանյան զինվորները հետապնդում էին փախչող ռուսներին»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

285. Secretariat General of the National Security Council, “Before and After 12 September”, pp. 215—217.

286. Istanbul HURRIYET, 19 Jan 82.

287. Istanbul TERCUMAN, 15 Jan 82.

288. Tokay Gozutok, “In Armenian Cultural Centers”, Istanbul TERCUMAN, 15—19 Mar 82.

289. Istanbul MILLET, 18 Feb 77.

290. Arthur Beylerian, Les Origines de la Question Armenienne, du Traite de San Stefano et Congres de Berlin (1878), Revue d’Histoire Diplomatiqe, Jure 1973, A. Delon, Paris.

291. “Correspondences, Traites du Grand Seigneur”, Paris, 1886, p. 49.

292. “Memoires des Ambassadeurs de France auprès des Sultans Ottomans”, Paris, 1891.

293. Istanbul MILLIYET, 27 Apr 82.

294. “From British Ambassador in Washington R. C. Craige to Lord Curzon”, British Foreign Ministry Archives, 13 July 1921, 371/6504/8745.

295. Ibid., 29 July 1921, 371/6504/8745.

296. Prime Ministry Archives, Istanbul Assemble Cabinet Minutes, No 149.

297. Prime Ministry Archives, Yildiz Documents, Section 19, Document No 123, File No 143, Carton No 56.

298. J. Stanford Shaw and Ezel Kural Shaw, Ibid. <History of the Ottoman empire and modern Turkey>, Cambridge University Press, 1977.